# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արփի բնակավայր 13.12.2024 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Մավ շին» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ վարչական ղեկավար Ռազմիկ Վարդանյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը ներկայացրեց դպրոցի կառուցման ժամանակ առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, աղմուկի, հողի որակի հետ կապված:

Դպրոցի նախագծման աշխատանքներ իրականացնող ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին դպրոցի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն, նշեցին կառուցվող դպրոցի տեխնիկատնտեսական ցուցանիշները, ներկայացրեցին շինարարական աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության

փուլում նախատեսվող աշխատանքները: «Մավ շին» ընկերության ներկայացուցիչը հավաստիացրեց, որ շինարարությունն ընթանալու է պահպանելով բոլոր նորմերը, իսկ աշխատողները ներգրավվելու են համայնքից:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչները հարց բարձրացրեցին դպրոցի մասնաշենքերից մեկի քանդման վերաբերյալ, նշեցին, որ իրենք չեն ցանկանում, որ հին մասնաշենքը քանդվի և այն անհրաժեշտ է օգտագործել գյուղի կարիքների համար, ինչին նախաձեռնողի ներկայացուցիչը պատասխանեց, որ դպրոցի քանդումը պայմանավորված է նրա սեյսմակայունությամբ և անհրաժեշտություն կա այն քանդելու:

Դպրոցի տնօրենը հարց բարձրացրեց դպրոցի դասասենյակների քանակի և դասասենյակներում նստատեղերի քանակի վերաբերյալ, ինչին ի պատասխան նախագծող ընկերության ներկայացուցիչը նշեց, որ նախատեսված դասասենյակները բավարար կլինեն մոտ 200 աշակերտի ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար: Նա նշեց, որ նախատեսվել են նաև  լաբորատոր և համակարգչային դասասենյակներ:

Հարությունյանը հետաքրքրվեց, թե ինչպես է իրականացվելու կեղտաջրերի հեռացումը, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ տեղադրվելու է մաքրման կայան և իրականացվելու է կեղտաջրերի մաքրում:

Քննարկվեց նաև տարածքի կանաչապատման, մանկապարտեզի, խաղադաշտի, ոռոգման ձևերի հարցը:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, դպրոցի ուսուցիչներ, Արփի համայնքի վարչական ղեկավարը, համայնքի, նախաձեռնողի և ՀՏԶՀ-ի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** [signature] **Ք. Հարությունյան**

**«Մավ շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** [signature] Ռ. Հովհաննիսյան